**600.0047.28.09.01**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2001 թվականի № 47
ք. Երևան

**ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի սեպտեմբերի 29-ի №28 և 2000 թվականի սեպտեմբերի 29 №19 որոշումների 1-ին կետերում փոփոխություն կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի բ) ենթակետը, 23-րդ և 25-րդ հոդվածները, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի սեպտեմբերի 29-ի «Լիցենզիաներ տրամադրելու մասին» №28 որոշման 1-ին կետում «երկու տարի ժամկետով» բառերը փոխարինել «չորս տարի ժամկետով» բառերով:
2. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի սեպտեմբերի 29-ի «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին բնական գազի բաշխման գործունեության լիցենզիա տրամադրելու մասին» №19 որոշման 1-ին կետում «մեկ տարի գործողության ժամկետով» բառերը փոխարինել «երեք տարի գործողության ժամկետով» բառերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀՀ էներգետիկայի կարգավորող**
**հանձնաժողովի նախագահ՝ Վ. Մովսեսյան**